Արձանագրություն N 3
Համակարգչային նյութերի ձեռքբերման « ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/73» ծածկագրով գնման ընթացակարգի բացման նիստի

ք. Երևան

29.05.2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Չիլինգարյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ս. Ղարագյոզյան , Օ. Մկրտչյան
Ա. Սարգսյան , Ա. Հովհաննիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Կիրակոսյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/73» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Կ. Չիլինգարյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «**ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/73**» ծածկագրով գնման ընթացակարգի 19-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակցին որոշելու նպատակով <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետ համաձայն անցկացվող գների նվազեցման բանակցություններին ծանուցված մասնակիցներից ոչ մեկ չի ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0

2. Ընթացակարգի 1-ին տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին

(Կ. Չիլինգարյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակիցներ են ճանաչվել.

-1-ին և 2-րդ չափաբաժնների մասով «Նորմա-պլյուս» ՍՊԸ -ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից,

-3-րդ, 4-րդ և 10-րդ չափաբաժնների մասով «Էմ Սի Էս Կովկաս» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

-6-րդ, 7-րդ և 12-րդ չափաբաժնների մասով «Ստարտկոպի» ՍՊԸ-ն , որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

-8-րդ, չափաբաժնի մասով «Էդմոնդ Ասատրյան Վիրաբի» ԱՁ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

9-րդ, և 11-րդ չափաբաժնների մասով «Այ-Թի Թրեյդինգ» ՍՊԸ-ն , որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

-13-րդ, չափաբաժնի մասով «ՕԱԶԻՍ ԿՈՄՊՅՈՒՏԵՐ» ՍՊԸ-ն, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Կ. Չիլինգարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ Այ-Թի Պլազա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի որը մերժվում է , քանի որ հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերը կցված չեն համակարգում.

4. Ընթացակրգը որոշ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին

(Կ. Չիլինգարյան)

3.1 Գնման ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետերի:

3.2 Հաստատել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Կ. Չիլինգարյան)

3.1 Հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցների հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

3.2 Ծանուցել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի՝ տեխնիկական բնութագիրը՝ համաձայն հրավերի 6.1 հավելվածի:

Հրավերով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի կողմից կմերժվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:

6. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Չիլինգարյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն արձանագրության 5-րդ կետում նշված փաստաթղթերի գնահատման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Կ. Չիլինգարյան

Անդամներ՝ _____ Ս. Ղարագյոզյան

_____ Օ. Մկրտչյան

_____ Ա. Սարգսյան

_____ Ա. Հովհաննիսյան

Քարտուղար՝ _____ Ն. Կիրակոսյան